Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 20 -ի
N 3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հարություն Նավասարդյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017 թ հունվարի 20 –ի N 3 **- Ն** որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՆԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.....
4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Շահումյան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Շահումյան համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Շահումյան համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Շահումյան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Շահումյան համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Շահումյանի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Շահումյան համայնքի աշխատակազմը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական,

մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի ղեկավար՝ Հ.Գ.Նավասարդյան

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շահումյան համայնքը հիմնադրվել է՝ 1828 թվականից, Երևանից՝30կմ, մարզկենտրոնից 30 կմ հեռավորություն, բարձրությունը ծովի մակերևույթից՝900 մ:

Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցին , որը կառուցվել է բարերար Կարեն Հովհաննիսյանի հովանավորությամբ 2010 թվականին: 2012 թվականին հիմնովին վերանորոգվել է <<Սուրն Թուխ Մանուկ>> մատուռը:

Համայնքի միջով անցնում է միջպետական Մ-3 մայրուղին, ընդհանուր երկարությունը՝1,5 կմ:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության առկա թվաքանակը	**1850**
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	**493**
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	**3**
2.2	կիսակառույց տներում բնակվող	**0**
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	**17**

Համայնքի բնակչության 48% կազմում են տղամարդիկ և 52% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1850	961	889
	մինչև 1 տարեկան	23	12	11
	1-2 տարեկան	40	20	20
	3-4 տարեկան	42	21	21
	5-6 տարեկան	54	26	28
	7-10 տարեկան	106	54	52
	11-14 տարեկան	107	54	53
	15-17 տարեկան	80	35	40
	18 և ավելի տարեկան	1398	740	658
2.	Կենսաթոշակառուներ	171	106	65
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	3	1	2
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0
5.	Հաշմանդամ երեխաներ	2	0	2
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	1	0	1
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1	0	1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	1	0	1
9.	Հաշմանդամներ	46	17	29
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	1053	577	476
11.	Գործազուրկներ	42	25	17
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	24		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների	1		

	ընտանիքների թիվը			

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

- Շահումյան համայնքի վարչական տարածքը – 495.9 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր – 252.83 հա

  այդ թվում՝ վարելահող-121,01 հա,

  բազմամյա տնկարկներ-28,21

  այլ հողատեսքեր՝ 103,61
- Բնակելի ֆոնդի հողեր –209.93 հա
- Արդյունաբերական հողեր -10.09 հա
- Էներգետիկայի և տրանսպորտի հողեր -5.12 հա
- հատուկ պահպանվող հողեր -15.81
- Ձրային ֆոնդեր – 2.12 հա
- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը -
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 0.35 հա
- Շահումյան համայնքի սեփականություն համարվող հողեր - 126.45 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Շահումյան համայնքի 2017 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 37957,4 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 15,2 %
- Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ, թռչնապահությամբ և անասնապահությամբ : Այժմ համայնքում գործում է մեկ ջերմոցային տնտեսություն: Անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղվում են մանրածախ առևտրով:

- Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը հիմնական ճյուղերն են՝
  1. խաղողի այգիներ տարեկան շուրջ 45 տոննա
  2. պտղատու այգիներ տարեկան շուրջ 350 տոննա
  3. բանջարաբուծություն տարեկան շուրջ 2000 տոննա
  4. հացահատիկային կուլտուրա տարեկան շուրջ 120 տոննա
- Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը իրականացվում է տեղում և գյուղմթերքների շուկայում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Շահումյան համայնքի ղեկավարը վերընտրվել է 4-րդ անգամ անընդմեջ 2015 թ. դեկտեմբերի 6-ին: Համայնքի ավագանին / բաղկացած 7 անդամներից / ընտրվել է 2016 թ. սեպտեմբերի 18 - ին:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով

1. Համայնքի ղեկավար – 1 միավոր
2. տեղակալ – 1 միավոր
3. Աշխատակազմի քարտուղար – 1 միավոր
4. համայնքային ծառայողներ – 5 միավոր
5. տեխնիկական աշխատողներ – 3 միավոր

Շահումյանի համայնքապետարանին կից մշակույթի տան աշխատողների ընդհանուր թիվը՝ 5 մարդ՝

1. մշակույթի տան տնօրեն՝ 1 միավոր
2. գրադարանավար՝ 1 միավոր
3. գեղմասվար՝ 1 միավոր
4. պարուսույց՝ 1 միավոր
5. պահակ՝ 1 միավոր

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Շահումյան համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 27800 քմ, անհատական բնակելի տների թիվը՝ 203, կիսակառույց տների թիվը՝ 20 , տնակներում ապրող ընտանիքների թիվը՝ 3 :

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը 20 կմ է, որից 1,5 կմ-ը հանրապետական նշանակության: Կենտրոնական ճանապարհի տեղադրված է արագաչափ, ճանապարհային երթևեկության նշաններ՝ անհրաժեշտ կանոնակարգով:

Հիմնախնդիրներ՝

ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ

հասարակական տրանսպորտի որոշ կանգառների անբարեկարգ վիճակ.

Գովազդ, առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների

ընդհանուր թիվը կազմում է 6, որտեղ զբաղված են 6 աշխատող, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք

բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործունեության թույլտվության համար:

Հիմնախնդիրներ՝

Համայնքում չկա հանրային սննդի սպասարկման ոչ մի օբյեկտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ

Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց, դպրոցում սովորող աշակերտների թիվը՝ 198, աշխատողների թիվը՝ 32: Դպրոցը գազիֆիկացված է, ունի կաթսայատուն, մշտական խմելու ջուր և լոկալ կոյուղի:Դպրոցի մարզադահլիճը և ֆուտբոլի դաշտը գտնվում են անմխիթար վիճակում, չունեն անհրաժեշտ գույք, շենքը ունի մասնակի վերանորոգման կարիք:

Դպրոցի հիմնախնդիրներն են՝

- շենքի մասնակի վերանորոգում
- ֆուտբոլի դաշտի կապիտալ վերանորոգում
- մարզադահլիճի կապիտալ վերանորոգում

2014 թվականին Քրոնիմետ բարեգործական ընկերության կողմից համայնքում կառուցվել է նախադպրոցական ուսումնական հաստատություն/մանկապարտեզ/, նախատեսված երկու խմբի համար: Մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N1170-Ն որոշմամբ պետբյուջեից հատկացված /կապրիալ սուբվենցիա/ 10 մլն ՀՀ դրամ գումարով: Ներկա պահին մանկապարտեզը չի գործում, քանի որ առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

Մանկապարտեզի հիմնախնդիրներն են՝

- 1. ջեռուցման ապահովում
- 2. մանկապարտեզի բակում չկա համապատասխան խաղարաններ
- 3. գազիֆիկացված չէ
- 4. տնտեսական ապրանքների, խաղալիքների ձեռք բերում:

Համայնքի ենթակայության տակ գտնվող մշակույթի տունը կառուցվել է 1989թվականին, գտնվում է անմխիթար վիճակում, ունի կապիտալ վերանորոգման կարիք: Համայնքի միջոցներով վերանորոգվել է 2 սենյակ՝ պարի խմբակի համար: Շենքում գործում է գրադարան, որն ունի մոտ 10000 կտոր գրականություն, ապահովված է մասնագետով, պահպանվում է աշխատանքային բնականոն ռիթմը:

Հիմնախնդիրներ՝

- մշակույթի տան կապիտալ վերանորոգում և կահավորում.
- երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.

- երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ.
- ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.

Ֆիզկուլտուրա և սպորտ

Հիմնախնդիրներ՝

- մարզադպրոցի կարիք.
- ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքում գործում է «Շահումյանի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ, որը սպասարկում է 4 հարակից գյուղերի, շենքը նորոգված է, սակայն հին է և տարածքով փոքր, չունի անհրաժեշտ կահավորանք: Համայնքի բուժամբուլատորիայում աշխատում է 11 աշխատող, այդ թվում՝ 2 ընտանեկան բժիշկ:

Հիմնախնդիրներ՝

- նոր շենքի կառուցում.
- անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռք բերում.

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ՁԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

2010թվականին համայնքում կառուցվել է <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցին և 2012թվականին հիմնովին վերանորոգվել է <<Սուրբ Թուխ Մանուկ>> մատուռը, որը խթանում է համայնքում տուրիզմի զարգացմանը:

Էներգամատակարարում

Շահումյան համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի Էլցանցներ ընկերության կողմից:

Շահումյան համայնքի գազամատակարարումը իրականացվում է Գազպրոմ – Արմենիա ընկերության կողմից:

Արտաքին լուսավորություն

Ներհամայնքային ճանապարհները և փողոցները հագեցած չեն գիշերային լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: Շահումյան համայնքը ունի արտաքին լուսավորման կարիք:

Հիմնախնդիրներ՝

- արտաքին լուսավորության համակարգի հենասյուների բացակայություն
- լուսային սարքավորումների և էլեկտրահաղորդալարերի բացակայություն

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1. մանկապարտեզի շենքի գազիֆիկացում և բակի խաղարանների ձեռք բերում
2. արտաքին լուսավորության ցանցի անցկացում
3. ներհամայնքային փողոցների նորոգում

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի և տեղական տուրքերի հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 84,7%, 2018թ.՝ 83,8%, 2019թ.՝ 84,5 %, 2020թ.՝ 84,2%, 2021թ.՝ 85,7%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2016թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
		նախ.	փաստ.	նախ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	39182,4	39601,0	37957,4	42943,0	44943,0	47458,0	52458,0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	6980,0	6539,7	5755,0	6910,0	6910,0	6910,0	6910,0
1.1	Հողի հարկ	4500,0	2900,5	3200,0	4500,0	4500,0	4500,0	4500,0
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար	2270,0	3639,2	1900,0	2200,0	2270,0	2270,0	2270,0
1.3	Տեղական տուրքեր	210,0	192,0	655,0	655,0	655,0	655,0	655,0
1.4	**Գույքի վարձակալությունից եկամուտներ** Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	33,0	33,0	33,0	33,0	33,0	33,0	33,0
2	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/**	32169,4	32547,5	32169,4	36000,0	38000,0	40000,0	45000,0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ							

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն

(եկամտների կանխատեսումը 2016 թվականի համեմատ աճը արտահայտված տոկոսներով)

Եկամտի և ծախսի տեսակը	2016թ. տարեկան պլան	2017թ. կանխ.	2016թ փաստ.նկատ %	2018թ. կանխ.	2016թ փաստ.նկատ %	2019թ. կանխ.	2016թ փաստ.նկատ %	2020թ. կանխ.	2016թ փաստ.նկատ %	2021թ. կանխ.	2016թ փաստ.նկատ %
Ընդամենը եկամուտներ	**39182,4**	37957,4	0%	42943,0	8,4%	44943,0	13,5%	47458,0	19,8%	52458,0	32,5%
Հարկային եկամուտներ որից	6980,0	5755,0	0%	6910,0	5,6%	6910,0	5,6%	6910,0	5,6%	6910,0	5,6%
Հողի հարկ	4500.0	3200.0	0%	4500.0	55.1%	4500.0	55.1%	4500.0	55.1%	4500.0	55.1%
Գույքահարկ /շենք և ավտո/	2270.0	1900.0	0%	2200.0	0%	2270,0	0%	2270,0	0%	2270,0	0%
Տեղական տուրքեր	210,0	655,0	246%	655.0	246%	655.0	246%	655.0	246%	655.0	246%
Այլ եկամուտներ	33.0	33.0	0%	33.0	0%	33.0	0%	33.0	0%	33.0	0%
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	32169.4	32547.5	0%	36000.0	10.6%	38000.0	16.7%	40000.0	22.9%	45000.0	38.3%

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն համայնքապետարանի և մշակույթի տան շենքերը և ճանապարհները.

- գործազրկություն,սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- կոյուղու անմխիթար վիճակ
- ոռոգման համակարգի անմխիթար վիճակ

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրը դժվարություններ է առաջացրել համայնքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն 2. Համայնքի գազիֆիկացվածության բարձր աստիճան 3. Հեռախոսակապի և հեռուստաընկերությունների առկայություն 4. Տեխնիկական բավարար ապահովվածություն ունեցող բուժամբուլատորիայի առկայություն	1.Անբարեկարգ փողոցների առկայություն 2.Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի ձեռքբերման անհրաժեշտություն 3. Ծառայությունների մատուցման մշակույթի ոչ բավարար մակարդակ 4.Գործարար-ակտիվ երիտասարդների թույլ կապ 5.Առկա գործազրկություն 6.Բնակչության վարկունակության անկում 7. ժամանցի հնարավորության բացակայություն 8. Ներդրումային ծրագրերի և

5. առևտրի օբյեկտների /խանութների/ առկայություն 6. Համայնքային իշխանությունը պատրաստակամ է համայնքում ներդրողներին նպաստավոր պայմաններ առաջարկելիս 7.Անշարժ գույքի ցածր գներ 8. Նախադպրոցական, ն ուսումնական հաստատությունների առկայություն 9. Ոռոգման ցանցի առկայություն	արտասահմանյան ներդրողների բացակայություն 9.Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիր 11. Կարկտակայանների բացակայություն
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
- Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության - Մեծ է աշխատուժի առկայությունը - Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը	- Ոռոգման ներտնտեսային ցանցի անմխիթար վիճակ - Համայնքում գործազրկությունը - Բնակչության անվճարունակ լինելը - Կարկտակայանեերի բացակայությունը

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Շահումյանի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	15%	10%	9.0%	9.0%	8.0%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝ արտահայտված տոկոսով	0.%	1,6%	1.6 %	1.6 %	1.6%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.5%	0.5%	0.5%	0.5%	0.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ.
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում.
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար.
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները.
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում.
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները.
- համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ.
- համայնքի ճանապարհների հիմնանորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ **Մշակույթի տան շենքի կապիտալ վերանորոգում**
- ✓ **Համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում**
- ✓ **Մանկապարտեզի շենքի գազիֆիկացում, բակի խաղարանների և տնտեսական ապրանքների ձեռք բերում**
- ✓ **Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում**
- ✓ **Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում**
- ✓ **Ջրահեռացման համակարգի կառուցում/կոյուղի/**
- ✓ **Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցում**
- ✓ **Կանգառների պատրաստում, տեղադրում**

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1

Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Մշակույթի տան կապիտալ վերանորոգում**						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ կահավորված մշակույթի տուն,համայնքում մշակույթի զարգացման համար							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	50900,0	50000,0	50000,0	50000,0	50000,0
Ծրագրի միջանկյալ	1.						

արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	900,0	0	0	0	0
2. Կապիտալ վերանորոգում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	50000,0	50000,0	50000,0	50000,0	50000,0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Նորոգման աշխատանքների կազմակերպում 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 900,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 250000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 250900,0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինասավորման մի մասի աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						

Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակույթի տան հիմնանորոգում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր N 2

Համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում**						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ համայնքապետարանի վերանորոգված շենք, ստեղծել հարմարավետ պայմաններ աշխատանքի համար							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2300,0	2000,0	2000,0	2000,0	2000,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	300,0	0	0	0	0
2. Կապիտալ վերանորոգում	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				

		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000,0	2000,0	2000,0	2000,0	2000,0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Նորոգման աշխատանքների կազմակերպում 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 10000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10300,0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինասավորման մի մասի աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարանի աշխատակազմը և համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքապետարանի շենքի կապիտալ նորոգում, աշխատանքի բնականոն ռիթմը ապահովելու համար						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3

Մանկապարտեզի շենքի գազիֆիկացում, բակի խաղարանների և տնտեսական ապրանքների ձեռք բերում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Մանկապարտեզի շենքի գազիֆիկացում, բակի խաղարանների և տնտեսական ապրանքների ձեռք բերում**						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ընդլայնել և բարելավել համայնքի մանկապարտեզի պայմանները							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2800,0	2500,0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	300.0		0	0	0
2.Շենքի գազիֆիկացում, բակի խաղարանների և տնտեսական ապրանքների ձեռք բերում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2500,0	2500,0			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. փաստատթղթերի կազմում 1.2. գազիֆիկացում 1.3. խաղարանների ձեռք բերում և բակի կանաչապատում 1.4. տնտեսական ապրանքների ձեռք բերում						

	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. աշխատանքների կազմակերպում 2.2. աշխատանքների ավարտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 5000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5300,0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջեից ֆինանսավորել ծրագրի որոշակի մասը, ստանալ աջակցություն որևէ կազմակերպությունից
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մանկապարտեզի շենքի գազիֆիկացում, կանաչապատում, խաղահրապարակի հիմնում, տնտեսական ապրանքների ձեռք բերում: Մանկապարտեզի շահագործումը կբարելավի համայնքի երեխաների կրթական և դաստիարակության մակարդակը:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4

Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ նորգված, բարեկարգված փողոցներ և ճանապարհներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	5100.0	5100.0	5100.0	5100.0	5100.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը 1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 25000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 25500.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում, որից հետո կբարելավվի բնակչության կենսամակարդակը, կհեշտանա դպրոցականների, նախադպրոցականների և մանկապարտեզ հաճախողների երթևեկը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N5

<u>Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում		
Ծրագրի անմիջական նպատակ՝			
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ

Ունենալ գիշերային լուսատուներով լուսավորված, բարեկարգված փողոցներ		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1000,0	1000,0	1000,0	1000,0	1000,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	400,0	400,0	400,0	400,0	400,0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	600,0	600,0	600,0	600,0	600,0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում 1.2. Լարերի, մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5000,0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար	Բարեգործություն						

անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 6

Կոյուղաջրերի ցանցի կառուցում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կոյուղու ցանցի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Կոյուղագծերի կառուցում, համայնքի սանիտարական վիճակի բարելավում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	6000,0	6000,0	6000,0	6000,0	6000,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	0	0
	2.						
		Ելակետային	Թիրախային արժեքներ				

	Ցուցանիշներ	արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
2 .Կոյուղու ցանցի կառուցում		0	6000,0	6000,0	6000,0	6000,0	6000,0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 30000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30000,0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	համայնքի կոյուղու ցանցի կառուցում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N7

<u>Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Բուժամբուլատորիայի շենքի կառուցում, համայնքի բնակիչների առողջապահական ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0		40000,0	40000,0	40000,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
2 .Բուժամբուլատորիայի շենքի կառուցում		0	0	0	40000,0	40000,0	40000,0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 120000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 120000,0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կկառուցվի բուժամբուլատորիայի նոր շենք, որի շնորհիվ հնարավոր կլինի պատշաճ կերպով սպասարկել համայնքի և հարակից չորս համայնքի բնակիչներին

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N8

Կանգառների պատրաստում, տեղադրում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Կանգառների պատրաստում, տեղադրում**						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքում ունենալ բարեկարգ կանգառներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	500,0	500,0	500,0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Կանգառների պատրաստում,տեղադրում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	200,0	200,0	200,0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	300,0	300,0	300,0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500,0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 1000,0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1500,0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատույժ, նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կանգառների պատրաստման ու տեղադրման արդյունքում՝ հասարակական տրանսպորտին սպասելու ընթացքում բնակչության բոլոր շերտերը կանգառներում կարող են պաշտպանվել անձրևից արևից և մասամբ էլ ցրտից:

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Շահումյան համայնքի ՀԶՀԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է կից ֆայլում:

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլ*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 6. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(Շահումյան համայնք)

(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջե տա-վորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ					Ծախսերի դասեր			Ֆինանսավորման կարգավիճակ			
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն /հովիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ բանակցություններ ընթանում են	Ներդրումային է	Ֆինանսավորման հարցը
Մշակույթի տան կապիտալ վերանորոգում		50900,0	50000,0	50000,0	50000,0	50000,0	V	V		V								
Համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում		2300,0	2000,0	2000,0	2000,0	2000,0	V			V		V						

Մանկապարտեզի շենքի գազիֆիկացում, խաղահրապարակի կառուցում և տնտ. ապր. ձեռք բերում		2800,0	2500,0				V	V	V	V								
Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում		5100,0	5100,0	5100,0					V		V	V						
Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում		1000,0	1000,0	1000,0	1000,0	1000,0	V											
Կոյուղաջրերի ցանցի կառուցում		6000,0	6000,0	6000,0	6000,0	6000,0	V											
Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցում				40000,0	40000,0	40000,0	V			V								
Կանգառների պատրաստում և տեղադրում		500,0	500,0	500,0			V			V	V	V						Լուծված չէ

Աղյուսակ 8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակա յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	**15**	**0**			**0**	**15**			**0**			**9**			**8**	**0**	**0**	X	Մարզպետարան, համայնքապետարան)	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	0	0			0	1,6			0			1,6			1,6	0	0	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	0,5	0			0	0,5			0			0,5			0,5	0	0	X	ՀՀ Ոստիկանութ-յուն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ	**1**	0			0	1			0			1			1	0	0			
1.1.Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի	100	0			0	100			0			100			100	0	0			

աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը																				
2.2. Համայնքի փողոցների բարեկարգում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2.5.Համայնքի հանգստի գոտու կառուցում	0	0			0	0			0			0			0	0	0	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
4.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը	0	0			0	0			0			0			0	0	0	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
4.7. Համայնքի մարզադպրոցի կառուցում	0	0			0	0			0			0			0	0	0	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով																				

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Շահումյան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի աշխատակազմը կմշակի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքի յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների

բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մ.Համբարձումյան